ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյան համայնք, 4-րդ պող., 2-րդ շենք

էլ. փոստ nalbandyan.armavir@mta.gov.am

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԿՐՏՉՅԱՆԻ

2019 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**24.01.2020թ.** ժամը 14.00

Մասնակցում են ՀՀ Արմավիրի մարզպետարանի Համլետ Կուրղինյանը, համայնքի ավագանին և համայնքի 205 բնակիչներ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյան համայնքի համայնքապետարանի ղեկավարը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ օրենսդրությամբ, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ,,Իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքներով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և համայնքապետարանի ենթակայության ՀՈԱԿ-ների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:

2019 թվականի ընթացքում համայնքապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված է եղել գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը և համայնքի տարեկան աշխատանքային պլանը: Համայնքապետարանի աշխատակազմի հիմնական նպատակը համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կաթնորսգույն սոցիալ

տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժեշտ են եղել լուծել 2019 թվականի ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում եմ Ձեզ:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

## ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետը և աշխատակազմը համակարգված ձևով աջակցում են համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ.մթերքների իրացմանը: Հետևողական աշխատանք է տարվել ոռոգման ջրի մատակարարման աշխատանքներիը բարելավելու ուղղությամբ, որը տվել է իր ցանկալի արդյունքը և հիմք հանդիսացել կայուն բերքի ապահովման համար:

Գյուղն ունի իր առանձնահատկությունները՝ մարդիկ հիմնականում զբաղվում են հողագործությամբ ու անասնապահությամբ: Կան նաև չմշակված հողատարածքներ, որի հիմնական պատճառներն են՝

1. Հողի սեփականատերերը բացակայում են համայնքից,
2. Բնակչության ֆինանսական դժվարությունները:
   Ուշադրության կենտրոնում է պահվել աճեցված բերքի իրացման աշխատանքները, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքները, ինչպես նաև պարբերաբար կատարվել է ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքները:

   Անմիջական հսկողություն է իրականացվել անասնաբուժական ծառայության իրականացման գործում. ժամանակին կատարվում է բոլոր հակահամաճարակային միջոցառումները, կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ:

Հետևողական և մշտական հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործունեության վրա: Ներկայումս համայնքում գործում է 11 առևտրի ծառայության օբյեկտներ:

## ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

## ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետարանի ուշադրության կենտրոնում է գտնվել և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվել հողերի նպատակային օգտագործման, ինչպես նաև ընդերքի օգտագործման վրա: Ամենօրյա աշխատանք է տարվել հողօգտագործողների հետ՝ հողի հարկի , գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման ուղղությամբ:

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

## ԲՆԱԳԱԿԱՌ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվել համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմաններ ճշգրտման աշխատանքներ, տրվել են ճշտված իրավիճակային հատակագծեր:

Պարբերաբար կատարվել է խմելու ջրի ջրագծերի վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքներ: Կատարվել է ,,Արտուշի արտիզան,, կոչվող արտեզյան հորի վերագործարկմանն ուղղված աշխատանքներ, կատարվել են զգալի ներդրումներ այդ ուղղությամբ, աշխատանքներն ավարտելուց հետո կբարձրանա ջրամատակարարման որակը: Սահմանվում է հսկողություն խմելու ջրի որակի, ինչպես նաև վարակազերծման ուղղությամբ:

Համայնքում ժամանակին կատարվում է աղբահանման աշխատանքներ՝ համայնքի բյուջեի հաշվին:

Համայնքում անհատ հողատերերից համայնքապետարանը ձեռք է բերել տնամերձ հողամասեր ,որոնց վրա բարերարների կողմից կառուցվում է բազմազավակ ընտանիքների համար բնակելի տներ՝ որոնց շինարարությունը կավարտվի գարնանը:

2019 թ. գյուղի տնամերձ հողամասերին ոռոգման ջուր մատակարարող ,,Չաթաղ,, կոչվող ջրատարը համայնքապետարանի միջոցներով ամբողջովին մաքրվեց և համայնքը տնամերձ հողամասերի ոռոգման ջրի խնդիր չի ունեցել:

Գարնան անձրևներից հետո, գյուղամիջյան ճանապարհների անմխիթար վիճակը կայունացնելու համար կատարվել է այդ ճանապարհների հրում-հարթեցում և ավազապատում:

## ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՊՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ,ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱԿԱՌ

Համայնքում գործում է 1 միջնակարգ դպրոց:
Աշակերտների թիվը՝ 485:
Աշխատողների թիվը 60-ը, որից ուսուցիչներ՝ 49:
Համայնքապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը: Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա:

2019 թվականի ընթացքում վերաբացվել է համայնքի մանկապարտեզը, որտեղ հաճախում են 48 երեխաներ՝ նաև հարևան համայնքներից: Մանկապարտեզի ամբողջ ծախսը իրականացվում է համայնքի բյուջեի և ծնող-վճարների հաշվին:

Համայնքապետարանը նախաձեռնել է տարբեր միջոցառումներ՝ որոնց կազմակերպման համար համայնքի բյուջեից հատկացվել է անհրաժեշտ գումար: Կազմակերպվել է՝ երաժշտական դպրոցի

հաշվետու համերգ՝ համայնքում գործող մշակույթի տանը, պարի խմբի երեխաների մասնակցությամբ և գյուղապետարանի ֆինանսավորմամբ: Մեծ ուշադրություն է դարձվում թոշակառուներին և երիտասարդության հետ տարվող աշխատանքներին՝նրանց հանգիստը նորմալ կազմակերպելու նպատակով: ART բարեգործական ընկերության և Նալբանդյան համայնքի ֆինանսավորմամբ համայնքում բնակվող արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների ընտանիքների անդամները և մասնակիցները մեկնել են հանգստի գեղատեսիլ Սև ծով : Կազմակերպվել է միջոցառուներ, նվիրված քաղաքացու օրվան, մայիսի 9-ի եռատոնի, երեխաների պաշտպանության օրվան: Նոր-տարվա առթիվ մշակույթի տանը կազմակերպվել է շքեղ հանդիսություն:

Ուշադրության կենտրոնում է գտնվում ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը: Համայնքի մշակույթի տանը գործող արևելյան մարտարվեստի խմբի անդամները լավ արդյունքներ են գրանցում տարբեր մրցումներում:

Համայնքապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում է նաև առողջապահության ոլորտը: Համայնքապետարանը վերահսկում է նաև առողջապահական հիմնարկի աշխատանքները, աջակցում է սանիտարահիգիենիկ վիճակի բարելավմանը, հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը, դրա հետ մեկտեղ իրականացվում է բարերարների կողմից կառուցվող նոր բուժ կետի շինարարությունը, որը կավարտվի 2020 թվականի ամռանը :

Համայնքում գործում է «Խնամակալության և հոգաբարձության»,հանձնաժողով,որի հիմնական խնդիրը խնամքից և ուշադրությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերումն ու դաստիրակումն է : Ուշադրության կենտրոնում են գտնվում սոցիալապես անապահով ընտանիքները , սոցիալապես անապահով 51 ընտանիքների ավտոմեքենաների գույքահարկը զիջվել է: Համայնքում հաշվառված են 385 թոշակառուներ այդ թվում 332 ծերության և աշխատանքային , 4-ը կերակրողը կորցնողի, 21-ը հաշմանդամության : Նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 75: Թոշակները և նպաստները տրվում են ժամանակին :

Համայնքում բարձր է պատախանատվությունը զորակոչիկների հաշվառման և զորակոչի կազմակերպման նկատմամբ : Զորակոչից խուսափողներ չկան :

Համայնքի տնտեսությունների թիվը 864 է, բնակչության թիվը՝ 4410 մարդ, գյուղատնտեսության մեջ զբաղվում են 2250մարդ:

2019 թվականի ընթացքում համայնքում ծնվել են 41 երեխա , մահացել՝ 13 մարդ:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2019 թվականի ընթացքում հավաքագրվել է եկամուտներ՝

հազար դրամ

| N | Անվանումը | 2019թ. հաշվետվություն | | Կատարողական % |
|---|---|---|---|---|
| | | Պլան | Փաստացի | |
| 1 | հողի հարկ | 25200.0 | 15371.5 | 61 |
| 2 | գույքահարկ | 7638.2 | 5554.0 | 72.7 |
| 3 | տեղական տուրքեր | 700.0 | 150.0 | 21.4 |
| 4 | ոչ հարկային եկամուտներ | 5378.0 | 3392.7 | 63.1 |
| 5 | պետ.բյուջեից տրամադրվող դոտացիա | 52603.8 | 52603.8 | 100 |
| 6 | Պետ. Բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ/սուբվենցիաներ/ | 1166.9 | 1166.9 | 100 |
| 7 | Վարչական իրավախախտում-ների պատժամիջոցներից եկամուտներ | | | |
| 8 | Դատական որոշման կատարում | | | |
| | ընդամենը վարչական բյուջե | 92686.9 | 78238.9 | 84.4 |

2019 թվական

հազար դրամ

Ծախսային մաս

| 2019 թվական | | | |
|---|---|---|---|
| *N* | *ծախսերի անվանումը* | *պլան* | *փաստացի* |
| 1 | Տեղական ինքնակառավարում | 34100.0 | 25737.0 |
| 2 | Համայնքային այլ ծառայություններ | 3170.0 | 252.4 |
| 3 | Մշակույթ, սպորտ և ռադ.հեռ.հաղ. | 8601.5 | 6454.1 |
| 4 | Կրթություն | 20866.9 | 17212.1 |
| 5 | Բնակկոմունալ տնտեսություն | | |
| 6 | Զրամատակարարում | 16220.0 | 12629.8 |
| 7 | Սոց.օգնություն | 3000.0 | 1500.0 |
| 8 | Նվիրատվություն | 200.0 | 0 |
| 9 | Պահուստային ֆոնդ | 6200.0 | 3800.0 |
| 10 | Վարչ.բյուջ.հատկացում ֆոնդ. | 0 | 0 |
| 11 | Ճանապարհների վերանորոգում | 100.0 | 0 |
| | Սարքեր և սարքավորումների ձեռք բերում | 1900.0 | 1750.0 |
| | Ընդամենը | 94216.9 | 68501.4 |
| | | | |

,,Քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման կարգի մասին,, ՀՀ օրենքի 7 ոդհոդվածի պահանջի համաձայն, Նալբանդյանի համայնքապետարանում 2019թ.-ի ընթացքում ստացվել է 50 դիմում:

Դիմումներում բարձրացվել են սոցիալական, ֆինանսական, հողային, շինարարության և այլ բնույթի հարցեր,որոնք սահմանված կարգով քննարկվել են և տրվել են պատշաճ լուծումներ:

Ընթացիկ ժամանակահատվածում գյուղապետարանի աշխատակիցների փաստացի թվաքանակը կազմել է 8 մարդ , որից 5-ը՝ համայնքային ծառայողներ:

2019 թ.-ի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 7 հերթական և 1 արտահերթ նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերող տարբեր բնույթի հարցեր, և կայացվել են որոշումներ:

2019 թվականի ընթացքում համայնքում կազմակերպվել են հանրային լսումներ, որոնցում քննարկվել են տարբեր հարցեր ու հիմնախնդիրներ.

1. Նախատեսվում է սուբվենցիոն ծրագրով համայնքում տեղադրել արևային էներգիայի սնուցման մարտկոցներ՝ որը մասամբ կլուծի խմելաջրի արդյունավետ մատակարարման, մշակույթի տան և մանկապարտեզի էներգամատակարարման հարցը: Ծրագրի 20 միլիոն դրամ արժեքի 9 տոկոսը ներդրվելու է համայնքի բյուջեից:

2. Քննարկվել է խաղողի և ծիրանի այգիների ապահովագրության ներդրման ծրագիրը:
3. Ինտենսիվ այգիների, խելացի անասնագոմերի, հակակարկտային ցանցերի և կաթիլային ոռոգման համակարգի ներդրման համար կառավարության կողմից սուբսիդավորման ծրագրերը:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Թեև համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման և որոշ ուղղություններով իրականացված միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով:

## ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Խմելաջրի ցանցի հիմնանորոգում, որը կնպաստի համայնքի բնակիչների առողջության պահպանմանը,
2. Դաշտամիջյան խորքային հորերի վերագործարկում՝ որով կլուծվի հողատարածքների ոռոգման հարցը,
3. ,,Չաթաղ,, ջրատարի կիսախողովակների անցկացում, որը կբացառի ոռոգման ջրի անտեղի կորուստը,
4. Մշակույթի տան ջեռուցման համակարգի անցկացում, որը կնպաստի երիտասարդության և թոշակառուների ժամանցի կազմակերպմանը,
5. Համայնքի պողոտաների ասֆալտապատում, որը կնպաստի համայնքի բնակիչների սոցիալական, կուլտուրայի և մշակույթի հարցերի զարգացմանը:

# ՈՒՂԵՐՁ

*Նալբանդյան գյուղական համայնքի*
*ընդհանուր ժողովի կողմից*

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ՝

Համայնքի ընդհանուր ժողովում բնակիչների և ավագանու կողմից հարց բարձրացվեց ուղերձով դիմել Ձեզ

1 Խմելաջրի ցանցի հիմնանորոգում, որը կնպաստի համայնքի բնակիչների առողջության պահպանմանը,
2. Դաշտամիջյան խորքային հորերի վերագործարկում՝ որով կլուծվի հողատարածքների ոռոգման հարցը,
3. ,,Չաթաղ,, ջրատարի կիսախողովակների անցկացում, որը կբացառի ոռոգման ջրի անտեղի կորուստը,
4. Մշակույթի տան ջեռուցման համակարգի անցկացում, որը կնպաստի երիտասարդության և թոշակառուների ժամանցի կազմակերպմանը,
5. Համայնքի պողոտաների ասֆալտապատում, որը կնպաստի համայնքի բնակիչների սոցիալական, կուլտուրայի և մշակույթի հացերի զարգացմանը:

Խնդրվում է Ձեր միջնորդությունը՝ առաջացած խնդիրների լուծման ուղղությամբ:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ..... Գ. ՄԿՐՏՉՅԱՆ